

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՃԱՆՏՐԻ ՅԱՐԵՒԵԼՍ

(ՏԽ ԵՃ 211-2)

ԽԳ

Կէօք—չայ չիմն. — Իւր տեսքն, իւր տարածութիւնն, իւր ձկուքն և անոնց նկարագիրն. — Ժամանումն ի Նոր-Պայագիտ. = Անոյոք Մաշական մը. — Ողջոյն հրաժեշտի կարաւաններն. — Նոր-Պայագիտ քաղաքն. — Լճին եզերքն. — Բուռնականութիւնն :

25 յուլիս. — Ահա այսօր կը վերջանայ մեր ձիով ճանապարհորդութիւնն, վասն զի մեր վերջին օթեանն Նոր-Պայագիտ պիտ'ըլլայ: Կէսօրէն վերջը ժամը մէկին միջոցները կարաւանն յուղի կ'ընէ և Ագ—տաղի երկու քարակոյտից ստորոտէն կ'անցնի. յետոյ, առուակ մ'անցնելով՝ կը հասնինք լճին եզերքը, և այնուհետև անոր երկայնութեամբ յառաջ կ'երթանք:

Սեւանայ լիճը Կէօք—չայ (Կապոյտ Ծովակ) կը կոչեն թուրքերն, Պարսիկներն՝ Տէրիա—շիրին (Սնոյ լիճ), իսկ Հայերն՝ Գեղարդունիք կամ Գեղամայ ծով: Եւ յիշատի, աչացս երկցածին համեմատ՝ Սեւանայ լիճն կը ստուգէ իւր Կապոյտ Ծովակ մակերևութիւնը, վասն զի իւր ալէկոծող և փրփրալից ալիքներն գեղեցիկ կապոյտ գոյն մ'ունին: Եւ որքան անսովոր բան է տեսնել գրեթէ 2000 մետր բարձրութեամբ այս հիւսնալի ջրոյ մակերևութիւնը, որ կարծես պորփրէն ընդարձակ բաժակի մը մէջ ամփոփուած կ'երևի: Եռանկիւնն լիճն 1370 քառակուսի հազարամետրէն պակաս մակերևոյթ չունի, և հետևաբար երկուքուկէս անգամ աւելի մեծ է քան ձինեւայի լիճն: Իւր երկայնութիւնն 65 հազարամետր է, իսկ իւր ամենէն աւելի ընդարձակ լայնութիւնն 32 հազարամետր կը հաշուի: Իւր եզերքներն շրջապատուած են պորփրով և գորշագոյն հրաբխային հողանքներով, որոնք չեզոք տեսք մ'ունին և սակայն խոր տխրութեամբ մը կը ճամակեն զմարդ, զորիկ լինելով ի սպառ ո՛ր և է բուռնականութեան հետքէ:

Զինքը շրջապատող լեռներն հրաբխային բնութիւն մ'ունենալով, ուրիշ կերպով կա-

րելի չէ բացատրել այս ընդարձակ լճին ներկայութիւնը այսպիսի բարձրութեան մը վրայ, բայց միայն նկատելով զայն իբրեւ շիջած հրաբխի հսկայանք բաժակ մը ջրալից: Այս բովանդակ կողմ գրաւուած է ճահիճներով և ձկնորսաց մի քանի աղբատ գիւղերով:

Ի Մուքանա հասնելով՝ ձիւրէն վար կ'իջնենք, աւագի միջէն խեցիներ (Limnea et Planorbis) ժողվելու համար: Լճին ջրերն շատ քիչ կրային լինելով՝ չափազանց փափուկ և թեթեւ են այս խեցիներն:

Աւերակաց և երեսի վրայ թողուած գիւղերու անթիւ հեղքերն կ'ապացուցանեն, թէ այս ափունքն, որք ներկայապէս այսպէս ամայի և տխուր են, տեսած են երբեմն շատ յաղող ժամանակներ: Յիշատի, Հայ Թագաւորաց իշխանութեան ժամանակ, Սեւանայ գեղեցիկ աւազանն կը կազմէր Սիւնեաց կամ Սիսական նահանգը, շատ բազմամարդ և առանձին վիճակներու բաժնուած: Գաւառն շատ քաղաքներ, գիւղաքաղաքներ, եկեղեցիներ և գեղեցիկ վանքեր ունէր: Բայց թրքաց, Վրաց և Ռուսաց պատերազմներու պատճառաւ այնչափ վնասներ կրեց, որ վերջապէս կամաց կամաց բոլորովին աւերակ դարձաւ: Եւ սակայն ժամանակաւ, ինչպէս և հիմայ, Սեւանայ եզերաց բնակութիւնն միշտ մեծամեծ անպատեհութիւններ յառաջ բերած է տարւոյն մեծ մասին մէջ, վասն զի ձմեռ ատեն շատ ցուրտ կ'ընէր այս բարձր սարահարթ տեղեաց մէջ, որոնք այն ժամանակ ձիւնեղէն թանձր վերարկուով մը կը ծածկուէին, մինչ լիճն այլ սառով կը պատի:

Կէօք—չայի ջրոց մէջ, որք լեռնանայ լճի ջրերէն քիչ նուազ խորութիւն ունին, կը

գտնուին անթիւ ձկուհը, որք մտին փափ-
կութեամբ, մանաւանդ կարմրախայտերն,
որք թերեւս ամենէն աւելի ընտրենքն են,
պետութիւնն բարձր զին մը օտանմանած է
այս ձկանց որսորդութեան համար:

Հաստ ժամանակ չի կայ որ նաւակներն կը
պատռեն կ'անցնին այս մրրկալից ծովը, ուր
հին ձկնորսք բնաւ չէին յանդգներ իրենք
զիրենք փտանգի մէջ դնել: Մինչև ցամա
1834, բնաւ նաւարկութիւն մը չէր եղած
այս լճիս վրայ: Սոյն եղբորաբնակ մարդիկ-
ներու նաւարկելու անյաջողութիւնն կրնայ
մեկնուիլ այնու, որ բնաւ նաւաշինութեան
յարմար փայտ չի գտնուիր եզերաց և Սե-
ւանայ չրկակայ լեռանց վրայ:

Ժամը չորսին, սաստիկ անձրևով և թանձր
մառախուղով մը՝ որ ծածկեր էր բոլոր լճին
երեսը, հափանք ի Նոր-Պայագիտ, ուր Նա-
լալիկն մեզի բնակութեան համար տուն մը
պատրաստել տուեր էր: Այս տեղ կենալու
միջոց շունիք, այլ մեկնիլ վաղը առաւօտ՝
ծիւկ կարելի ըլլայ: Բայց երթալու համար
պէտք է կառք գտնել, և դժբախտաբար այս
ժամանակներս շատ չեն գտնուիր, որովհետեւ
զործածելի մէկ կառք միայն կայ, և այն ալ
Մարկանի մը կը պատկանի: Իրեն ճով վա-
զել և կառք ուզել մէկ վայրկեանի զործ էր,
բայց մենք առանց շարքի օրը մտածելու
հաշիւներս ըրինք, և յիշաւի որչափ ամփո-
ցանք մնացինք՝ երբ լսեցինք թէ բնաւ յան-
ձնը շառնուր շարքի օր մեկնիլ, թէ և հա-
զար ուսրիւր ալ տալու ըլլայինք իրեն, որով-
հետեւ իրենց հանգստանի օրն էրն Հրէից
նման: Աղաչանք, առաջարկութիւնք, սպառ-
նայիք, ո՛չ մի բան կարող չեղաւ այս ան-
ողք Մարկանի համոզել, որ վեց սուք բար-
ձրութիւն ունէր, և իւր չէկ մագերէ շար-
ժելով՝ անուշութեամբ կը պատասխանէ.
Niett, nielt, barine, nié magou! (Ո՛չ, ոչ,
պարոն, չեմ կրնար): Թղթատարի կայարանն
երկէի սայլեր միայն ունէր, որ կը բաւէր
բեռանց համար: Գրուած էր թէ մինք ևս
պէտք էինք մասնակից ըլլալ, և մինչև կի-
րակի օրը սպասել Նոր-Պայագիտէն մեկնե-
լու համար. մենք այս բանիս վրայ զոհ պիտի
ըլլայինք եթէ ժամանակն այնքան չի փու-
թացնիր զմեզ:

Կարաւանի մարդիկն կու գան մեզի վերջին
հրաժեշտի ողջոյնը տալու: Յաւաք սրտի կը
տեսնեմ իմ ձիոյս և բոլոր միւս կտրիճ մարդ-
կանց մեզմէ բաժուելիւր, որ Մասիսէն մեկ-
նելեն ի վեր հետեւնին էին: Գրեթէ երեք
ամիս անցուցած այս իմ կեանքս որչափ ալ
որ պարտասեցուցիչ էր, սակայն նոյնչափ
ևս ախորժելի ըլլալով՝ հիմայ չեմ կրնար

դայն առանց տխրութեան թողուլ: Այլ ևս
պիտի չունենանք այն գեղեցիկ դադարները
բարձր լեռանց վրայ բացօթեայ վառուած
կրակին մօտ. այլ ևս պիտի չի վայելէք այն
հիանալի գիւղերները՝ որք այնքան խաղաղ
են Քարասաղի, Զանգեզուր և Մալաթի
միայնութեանց մէջ, յորս մարդ լիւուի կը
ծծէ առողջութիւն և կեանք: Բանակադրու-
թեան բովանդակ կա՛հ կարասին հոն ամփո-
փուած պատրաստ էին մեկնելու համար դէպ
ի Տփղիս, և այնուհետեւ թղթատարի կա-
յարանաց կամ պանդուկաց մէջ միայն պիտի
ապստանէինք:

Արամ Արաւահամեանց, մեր ուղեկցաց
գլխաւորն, և իւր շարքներ կը վերադառ-
նան ի Տէրէ-չիլէք (Մաղկածոր) շորհանա-
լութեան նամակով մի ի կողմանէ Պ. Հան-
տրի առ նահանգապետն, որուն սերալիւր
հրաւէրը պիտի չի կարենայինք ընդունիլ:
Ահա օր մ'ալ, և ապա պիտի բաժնուինք
իրարմէ, նմանապէս Համբարձում Փէոր-
դեանցն ալ պիտի թողուր զմեզ:

Նոր-Պայագիտ քաղաքն կանգնուած է
Կաւար-շալի եղերքը հիանալի դիրքի մը
վրայ 2050 բարձրութեամբ: Հոս ձմեռն շատ
ցուրտ կ'ընէ, լեռներու գրոյշէն մինչև 30
և 35 սաստիկան վար կ'իջնէ: Թուրք-Հայաս-
տանի գաղթականութեամբ մը բազմամարդ
դարձած է այս քաղաքս, որոնք գաղթիւր են
Պայագիտէն, ուսկից տաւած է նաև իւր Նոր-
Պայագիտ անունը: Քարային է, և իւր
տուններն այս եղականութիւնն ունին, որ ա-
մենուն մուտքերն ևս կամարածն են: Ռուս-
ներն ունին հոս եկեղեցի և դպրոց մի, իսկ
Հայերն երկու եկեղեցի, երկուք ալ դպրոց:
Քաղքին վերև երկաթաբարային բլրան մը
վրայ շինուած է շատ հին Հայոց գերեզմա-
նոց մը, ուր կանգնուած են քանդակածոյ
կոթողներ՝ յար և նման Չուդայի գերեզմա-
նատանն: Հոս Վանայ արձանագրութիւն մը
գտնուած է: Վեց վերստ անդին, Նոր-Պա-
յագիտի ոտարակութիւն խոշոր աւաններէ
միոյն մէջ՝ ի Կաւար գտնուած է նոյնպէս
սեպածն արձանագրութիւն մի և յետոյ տա-
րուած Տփղիսի թանգարանը: Նոր-Պայագիտ
ունի զինուորանոց մի: Սա մեծ կեդրոն մ'է
պաշարի կէզ-շայը չրկապատող արօտներու
մէջ սփռուած Քրդաց համար: Եթեմ կամ
ուժ հազար բնակիչ ունի: Գրեթէ ասկէ մէկ
հազարամետր հեռու, մի և նոյն գետին վրայ
կը գտնուի ուրիշ մեծ աւան մ'այլ, այս-
ինքն՝ Պաշ-Քէնա, որ բլրան մը կողին
վրայ շինուած կը տեսնուի:

Կաւար-շալի վրայ ձգուած է գեղեցիկ
կամուրջ մի, որուն յստակ լրերն կը թաւալին

խնոտ անկողնոյ մը վրայ : Խոմբ խոմբ բաղեր կը լուղան ջրոյ մէջ, և բազմաթիւ լուացուող մարդիկ հոն գետեզերաց վրայ ուրախ գուարթ կը զբօսնուն :

Նոր-Պայազիտ տարւոյն երկու երրորդ մասին մէջ ցուրտ կլիմայ մ'ունենալով՝ ուրիշ բերք յառաջ չի բերեր բայց միայն ցորեն, գարի և տիգկանեփայտ : Բայց այս քաղաքս, ինչպէս նաև Աջօջ-չայի անմիջական շուրջակայքն, այնքան առողջարար օդ մ'ունին, որ ամառ ժամանակ՝ Երևանէն և ուրիշ տեղերէն հոս կու գան բնակելու :

Նոր-Պայազիտի Հայերն շատ կը սիրեն պար խաղալու և երաժշտութեան զբօսանքները : Ամեն կիրակի, ժողովուրդն զոռնա և թմբուկի ձեռին կը զուարճանան Ալաւոր-չայի եզերքը ուռնեմաց հովանւոյն ներքե :

26 յուլիս. — Օդն գեղեցկացաւ, և գուարթափայլ արևն կը հրապուրէ զմեզ առաւօտեան շրմագայութեան մ'ընելու :

Այսօր սրբոյն Թադէի տօնն է, տարւոյն զըլխաւոր օրերէն մին. փողոցներն ոգևորուած են տօնական զգեստ հագած խուռն ամբոխիւ մը :

Վաճառանոցի խանութներէն շատերն գոցուած են, ընդ հակառակն մինք կ'ուզենք մի քանի զգեստ և քրդական գոհարեղէններ գնել, Նոր-Պայազիտ հագուազիւտ քաղաքներէն մին ըլլալով կարելի է գտնել քրդական զգեստ յոտից մինչև ցլուկն : Մեր զըլնած առարկայից մէջ կը գտնուի անազաւ պղնձէ փաթեթի կանթեղ մը Հին սոճով, որ փրան շատ հետաքրքրական արձանագրութիւններ և զարդարանքներ ունի : Օրուան մնացած մասը անցուցինք քաղաքին ներսը և գութսը շրմագայելով՝ ի ձեռին ունենալով լուսանկարի գործին :

Գէորգ, դանդաղ մկնն ըլլալով՝ շատ ուշ պատրաստեց ճաշերնին : Նորա դէմքն մարդու կարեկցութիւնը կը չարժէ, քնանալէն զատ ուրիշ բան ընելու կարող չէ : Այս իրիկուն մինչդեռ մենք կը ճաշէինք նա անկիւն մը կծկին նստեր էր, և տեսնելով որ մեր սեղանին կ'երկարի, ըսաւ ինձ յանկարծ. « Եթէ կը հաճեք, տիկին, չուտ բրձք քիչ մը, ես քօւն ունիմ » : Այս ճիշդ իրեն նկարագրին է :

27 յուլիս. — Գէորգ բեռներուն հետ առաջուրնէ կը մեկնի բեռնակրաց կառքով մը, իսկ մենք Մայրական փառաւոր փայեթնին մէջ նստած կ'երթանք դէպ 'ի Տելլեփան : Ամուսինս կ'ուզէր հոս թողուլ մեր տարօրինակ ծառան, սակայն Գէորգ նորա ուղն ընկնելով աղաչեց որ մինչև Տփղիս հետեւնիս զայ, ուր կը յուսար գործ մ' գտնել : Պ. Դանտր վերջապէս զիջաւ և կատարեց նորա խնդրքը :

Ճամբան լճին երկայնութեամբ յառաջ կ'երթայ, որ վայրիկ մ'անհետացեր էր, և ահա կրկին անգամ մեր աչաց կ'երևի բովանդակ խաղաղ և ցուրտ գեղեցկութեամբ : Իւր եզերաց վրայ աստ և անդ տեսնուող հրաբխային սաւորէն ոմանք մինչև 3400 մետրի կը հասնին : Ապտուլլահ-սար լեռն, ասկէ 7 հազարամետր հեռու, և Հարաւ-արևմտեան անկիւնը, կղզիացած և ճգմուած կոն մ'է, առեւանի իւր մէկ շիրմովն՝ ուր սրբոյ մը մարմինը թաղուած կ'աւանդեն առասպելայօգ զրոյցք : Ընդ մէջ Հարաւ — արեւելեան և Հարաւ — արևմտեան անկեան կը գտնուին շատ մը առուակներ : Տէրէ-չիլէկի ուղղութեամբ՝ բոլոր լեռանց ձիւններն Հալած են : Գրեթէ բոլորն ալ շիկած հրաբխային բաժակներ են, ինչպիսիք է Տէվէկէօզ, Ագտաղ, Նալ-Թէփէի կրկին գագաթունք, և դեռ ուրիշ շատեր :

Չորս այս գեղեցիկ մակերևոյթն իւր մէջ կ'ընդունի շատ առուակներ և բաւական յորդափուր հեղեղներ, բայց ինքն մի միայն հասունն ունի, և այն ևս ամառ ժամանակ, որ է Չանկա, որ Հիւսիս — արևմտեան կողմը երթալով կը թափի Երասխի մէջ, յետ ուղեկու Երևանի դաշտավայրը : Միայն Չանկայի այս հրաբխային հովիտը ճեղքուած մը կը կազմէ այս գեղեցիկ միօրինակ աւազանին :

Աջօջ-չայի լուրն առողջութեան վիստաւ կար կը համարուի. սակայն իրօզ միայն ցած և ճախճախուտ կողմերունն է այնպէս, ուր որ երկրորդական առուակներ կու գան կը խառնուին իրեն : Հարաւային կողմը կարծես թէ քիչ մը աղոտ է լուրն :

Այս և անդ խեղճ գիւղակներ կը տեսնուին, պատասպարեալ խողովներու մէջ ամփոփուած, ժայռերու մէջ, որոնց գորշ գոյնէն Հետ կը խառնուին : Բազմաթիւ հողակոյտք, Հաւանականաբար գերեզմանք, աստիճանաբար չարուած կը տեսնուին Աջօջ-չայի եզերաց վրայ. շատ հետաքրքրական պիտի ըլլար պեղումներ ընել այն տեղերը : Իսկոյն կտրատուած թերակղզի մը գիւմացին կ'ընէ, որուն վրայ Հին Հայկական վանք մը կը բարձրանայ : Այս կողմերս միայն եկեղեցիները և վանքերը ոտքի վրայ կանգուն մնացեր են :

Վերջին անձրևներն այնպէս փոքր են գետինը, որ ամէն վայրկեան կը վախճմ թէ կառքին զսպանակներն պիտի կոտրին սաստիկ և անընդհատ ցնցումներէն : Այս ճամբաներէս երթալու համար Հարկ է տեղւոյն բնիկ ձիւրէն և կառավարներն ունենալ :

Թէ և Աջօջ-չայի բոլորտեքը ոչ մի ծառ չի տեսնուիր, սակայն ճամբուն վրայ եղած

ժայռերու փլածներուն մէջ ճոխ բուսակա-
նութիւն մը կը գտնուի: Մինչդեռ սաստիկ
կիզիւ ամառ մը կ'այրէ և փոշի կը դարձունէ
դաշտավայրը, այս տեղ գարունն իւր բոլոր
գեղեցկութեամբ և դալարութեամբ կը ծաղ-
կի: Կը տեսնուին այրեծաղիկք, զանգակա-
ծաղիկք ամէն մեծութեամբ և գոյներով: Հըս-
կայ բաղրիւկ, և զանազան տեսակ խաչ-
խաչք: Վայրիւշ դեղնագոյն ակքանք: Երձ-
արմատք, վայրի վարդենիք և շահգորամք, և ուրիշ զանազան տեսակ ծաղիկներ, որոցմով
բուսաբան մը յիշաւի կրնայ շատ զոհ ըլ-
լալ և իրեն ուսումնասիրութեան առարկայ
ընել: Սմէն վայրկեան վար կ'իջնեմ և կը
քաղեմ անոնցմէ: Սյս արևոտ և ծաղկալիւր
ձամբուն տեսիլն, յետ ցուրտ մէգերուն բարձր

սարահարթի՝ որոնց խոտերուն մէջ միայն
Օճի-սխտոր (gentiane, բոգ) կոչուած ծա-
ղիկներն կը տեսնուէին, յիշաւի աչքերնիս
և սրտերնիս կը զուարթացնէր: Կ'ուզէի ես
մեր երազ ընթացքը փոքր ինչ դանդաղել,
որ աւելի երկար ժամանակ վայելեմ այն
տեսարանը, սակայն անողոք ժամանակն կը
փութացնէր զմեզ: Կառապանն թէ՛ ձայնով
և թէ՛ խորագանով կը վազցընէ իրեն ձիւրը-
կենդանիներն կատղած կ'երագեն իրենց քայ-
լերը՝ առանց արգելներուն ուշ դնելու: Կառ-
քին բոժոժներն այլ կ'երագեն իրենց դաշ-
նակաւոր եղանակը, և մենք փոթորկի նման
կ'անցնինք ակնախտիդ երկու կարգ վայրերի
ծաղկանց միջէն:

Շարայարեկի

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԻ

Արարատի փետրուարի թերթին մէջ (յէջ
100) Յաղագս ամպոց և նշանաց գրքին մի
քանի մթին կէտերը բացատրութեան կարօտ
կը համարուէր, որոց մէջ գլխաւորապէս կըս-
փիռք և « և փիկոս » բառերը, և թոյլ կը
տրուէր « Լրացնելու թերին և ուղղելու վրի-
պակները »: Այդ թողաւորութեան վրայ յի-
ցեալ հետեւեալ զիտողութիւնը կ'ընեմ:

Նախ և առաջ, մեր մատենադարանին օրի-
նական փոխանակ այդ երկու բառերուն՝ կըս-
փիռք և փիկոս, կը ղնէ հաւասարապէս եր-
կու տեղն այլ կենսիկս. և հաւանական է որ
ստուգագոյն լինի վերջինս, մանաւանդ եթէ
երկրորդ կի տեղ կարդանք մ' որով կենսիկս:
վասն զի յունարէն աղփոյն (սեռ. աղփոնոս)
կը նշանակէ իշամեղոս, բրեւ, և կամ ան-
գործ մեղոս, ինչպէս թարգմանուած է ի
նախնեաց (Ոսկ. Թ. Ա. 16). իսկ փիկոս,
յուն. փուկոս, կը նշանակէ ընդհանրապէս
անգոյր, մամռոս: Թերեւս շփոթուած լինի և
սփիկս (յուն. սփիկ-դիւկոս) բառին հետ, որ
կը նշանակէ նմանապէս իշամեղոս: պիծակ,
ճիւստաց, իսկ եթէ առարկէ որ, թէ հե-
ղինակն բաշտան կամ հառիկ կը կոչէ զայն,
պատրաստ է Ս. Գրոց վկայութիւնն՝ ուր
բաշտան կը կոչուի մեղուն. « ի թուղուն փոքր
է մեղուն » (Սիր. ժա. 3):

Դարձեալ, փոխանակ պապիռք բառին (Ա-
րարատ. էջ 103, ԿԳ, 152) « Յորժամ պա-
պիռք ի ծովէ ելանեն » և այլն, մեր օրի-
նական ունի պապիկք. անստույգ և տարակու-
սականք են երկուքն այլ. այդ բառին մեր-
ձաւոր յունարէն πᾶπιρος բառը կայ միայն,
որ կը նշանակէ « նորաբոյս կամ աղուամաղ
փետուր (թուչի) »: Շատ քաջբշտած մեկնու-
թիւն պիտի լինէր, եթէ այդ բառով ուղէինք
հասկնալ ընդհանուր իմաստով ձագռանք (թըռչ-
նոց). իբր πᾶπιρος (պապիկք), նորաբոյս
փետուր ունեցող, դեռաքոռնիկ: Այդ կտորը
մեր օրինակն ամբողջապէս այսպէս ունի.
« Յորժամ պապիկք ի ծովէ ելանեն զմի-
մեամք բազում նմանութեամբ որպէս որ
յորիոյնսստուռեղ (?) փոշի ելանէ, զհողմ
նշանակէ »: — « Յորժամ աղաղանք ձայն
առնեն », և այլն. (ԿԴ, 164). մեր օ-
րինակն զրէ աղաղանք: — Մեր օրինակին
մէջ կը պակասին աղաղանք և ձկնքաղք
բառերը (ԿԶ, 174). բայց մերս աւելի ունի
հետեւեալը. « Յորժամ փոթորկունք ամենայն յա-
մուր տեղին և ի ծառոց ծակս և ի բոցն իւ-
րեանց մտանեն, զմեռնային հողմն նշանակէ »:

Խ.